Գրանցված է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության
արդարադատության նախարարությունում
«06» ապրիլի 2017 թվական
Պետական գրանցման համար 1111737
Լեռնային Ղարաբաղի Հանրապետության
արդարադատության նախարար

Ա. ԴԱՆԻԵԼՅԱՆ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

«27» մարտի 2017 թվական N 111 -Ն

ք. Ստեփանակերտ

ԵԿԱՄՏԱՅԻՆ ՀԱՐԿԻ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՎԵՐԱԴԱՐՁՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԴԻՄՈՒՄԻ ԵՎ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅԱՆ ՁԵՎԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՈՒ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ՀԱՐԿԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 15-Ի N 3-Ն ՀՐԱՄԱՆՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2015 թվականի մայիսի 26-ի N 306-Ն որոշմամբ սահմանված կարգի 6-րդ կետի 1-ին ենթակետը և 10-րդ կետը ու «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 73-րդ հոդվածը՝

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ

1. Սահմանել՝

1) վարկառուի վճարած եկամտային հարկի վերադարձի դիմումի ձևը (Ձև N ԵՀՎ1)՝ համաձայն N 1 հավելվածի.

2) եկամտային հարկի վերադարձվող գումարի վերաբերյալ եզրակացության ձևը (Ձև N ԵՀՎ2)՝ համաձայն N 2 հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության պետի 2015 թվականի հունիսի 15-ի «Եկամտային հարկի գումարների վերադարձման համար

նախատեսված դիմումի և եզրակացության ձևերը սահմանելու մասին» N 3-Ն հրամանը:

Ս. ԹԵՎՈՍՅԱՆ

Հավելված N 1
Լեռնային Ղարաբաղի Հանրապետության
ֆինանսների նախարարի
2017 թվականի մարտի 27-ի
N 111-Ն հրամանի

ՁԵՎ N ԵՀՎ1

_____

Հարկ վճարողներին սպասարկող ստորաբաժանում

ԴԻՄՈՒՄ
ՎԱՐԿԱՌՈՒԻ ՎՃԱՐԱԾ ԵԿԱՄՏԱՅԻՆ ՀԱՐԿԻ ՎԵՐԱԴԱՐՁԻ

Անհատ ձեռնարկատեր վարկառուի անուն, ազգանուն և հայրանուն	ՀՎՀՀ										
Անհատ ձեռնարկատեր համավարկառուի անուն, ազգանուն և հայրանուն	ՀՎՀՀ										
Ֆիզիկական անձ վարկառուի անուն, ազգանուն և հայրանուն	ՀԾՀ										
Ֆիզիկական անձ համավարկառուի անուն, ազգանուն և հայրանուն	ՀԾՀ										
Վարկառուի ԼՂՀ-ում բնակության վայրի հասցե											
Վարկառուի կոնտակտային տվյալներ (հեռախոսահամար, էլեկտրոնային փոստի հասցե և այլն)											
Համավարկառուի ԼՂՀ-ում բնակության վայրի հասցե											
Համավարկառուի կոնտակտային տվյալներ (հեռախոսահամար, էլեկտրոնային փոստի հասցե և այլն)											
Դիմումի ներկայացման ամսաթիվ											

Խնդրում եմ 20___ թվականի _____ հաշվետու ժամանակահատվածում հիպոթեքային վարկի սպասարկման համար վճարված տոկոսների ՀՀ դրամով նշված գումարի չափով վերադարձնել եկամտային հարկի գումարները՝

Վարկառուի, համավարկառու(ներ)ի անունը, ազգանունը	Աշխատավարձ և դրան հավասարեցված վճարումը կատարած գործատուի անվանումը, ՀՎՀՀ	Եկամտային հարկի վճարված գումարը (ՀՀ դրամ)	Հիպոթեքային վարկի վճարված տոկոսների գումարը (ՀՀ դրամ)	Օգտատիրոջ անունը, ազգանունը, որին փոխանցվելու է վերադարձվող գումարը	Օգտատիրոջ բանկը, որին փոխանցվելու է վերադարձվող գումարը	Օգտատիրոջ հաշվի համարը
		Ընդամենը				

Վարկառու _____
(անունը, ազգանունը և ստորագրությունը)

Համավարկառու _____
(անունը, ազգանունը և ստորագրությունը)

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ **Հ. ԱԼԵՔՍԱՆՅԱՆ**

Հավելված N 2
Լեռնային Ղարաբաղի Հանրապետության
ֆինանսների նախարարի
2017 թվականի մարտի 27-ի
N 111-Ն հրամանի

ՁԵՎ N ԵՀՎ2

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N _____
ԵԿԱՄՏԱՅԻՆ ՀԱՐԿԻ ՎԵՐԱԴԱՐՁՎՈՂ ԳՈՒՄԱՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Անհատ ձեռնարկատեր վարկառուի անուն, ազգանուն և հայրանուն	ՀՎՀՀ									
Անհատ ձեռնարկատեր համավարկառուի անուն, ազգանուն և հայրանուն	ՀՎՀՀ									
Ֆիզիկական անձ վարկառուի անուն, ազգանուն և հայրանուն	ՀԾՀ									
Ֆիզիկական անձ համավարկառուի անուն, ազգանուն և հայրանուն	ՀԾՀ									
Վարկառուի ԼՂՀ-ում բնակության վայրի հասցե										
Վարկառուի կոնտակտային տվյալներ (հեռախոսահամար, էլեկտրոնային փոստի հասցե և այլն)										
Համավարկառուի ԼՂՀ-ում բնակության վայրի հասցե										
Համավարկառուի կոնտակտային տվյալներ (հեռախոսահամար, էլեկտրոնային փոստի հասցե և այլն)										
Եկամտային հարկի վերադարձի հաշվետու ժամանակահատվածը										

Վարկառուի (համավարկառուի) ____ _____ 20___ թ. ներկայացված դիմումի համաձայն՝ հաշվետու ժամանակահատվածում վճարված (այդ թվում՝ հարկային գործակալի միջոցով) եկամտային հարկի գումարից ենթակա է վերադարձման՝

Օգտատիրոջ անունը, ազգանունը, որին փոխանցվելու է վերադարձվող գումարը	Օգտատիրոջ բանկը, որին փոխանցվելու է վերադարձվող գումարը	Օգտատիրոջ հաշվի համարը	Պետական բյուջեի հաշվի համարը, որից կատարվում է վերադարձ	Հիպոթեքային վարկի վճարված տոկոսների գումարը (ՀՀ դրամ)	Եկամտային հարկի վերադարձման ենթակա գումարը (ոչ ավելի, քան վարձու աշխատողի համար եռամսյակի ընթացքում 700 000 ՀՀ դրամ, իսկ անհատ ձեռնարկատիրոջ համար՝ հաշվետու տարվա ընթացքում 2 800 000 ՀՀ դրամ)
			Ընդամենը		

Վերադարձման ենթակա գումարն արձանագրվել է վերադարձի ուսումնասիրությամբ, վերադարձի ստուգմամբ՝ իրականացված _____ _____ 20 թ. N _____ հանձնարարագրով (անհրաժեշտն ընդգծել և լրացնել) և (կամ) կամերալ ուսումնասիրությամբ:

Եզրակացության կազմման ամսաթիվը ____ _____ 20____ թ.

Հարկ վճարողներին սպասարկող ստորաբաժանում _____
(անվանումը)

Հարկ վճարողներին սպասարկող ստորաբաժանման ղեկավար _____
(անունը, ազգանունը և ստորագրությունը)

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ **Հ. ԱԼԵՔՍԱՆՅԱՆ**